Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/14 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/14-1

ք. Երևան

____/_____/2021թ.

« ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ »-ը ի դեմս Վահրամ Գասպարյան ի, որը գործում է « ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և « Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ »-ը, ի դեմս տնօրեն Տիգրան Բալդրյան ի, որը գործում է « Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2021 թ. ՀՀԿԳՄՍՆ կարիքների համար սպորտային միջոցառումների Հանրապետական ուսանողական 22 րդ մարզական խաղերի կազմակերպման ծառայությունների ձեռքբերում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:6

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 18700000.00 AMD(տասնութ միլիոն յոթ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ:7 17

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել

ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը։

ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար։ Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով։ Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում։8

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը։

5. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար։

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով։921Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում։

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ։

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց։

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը [5]։

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի

իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու

օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11[6]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	**Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ**
	tigranaro@mail.ru
ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2	**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**1510044106440100**
900011032621	**83812178**
02698732	**----------**
----------	**/ստորագրություն/**
/ստորագրություն/	**Կ.Տ**
Կ.Տ	

Подписано цифровой подписью: GASPARYAN VAHRAM 3203740222
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=2e62710a6b88, cn=GASPARYAN VAHRAM 3203740222
Дата: 2021.07.08 10:30:29 +04'00'

Digitally signed by BALDRYAN TIGRAN 2005840548
Date: 2021.07.06 15:08:50 AMST

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

17[6]Կիրառվում է, եթե կնքվում էնախագծայինփաստաթղթերիքաղաքաշինականփորձաքննության ծառայություններիմատուցմանպայմանագիր

[17]Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

[8]Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուիև Կատարողիմիջև համաձայնեցված չափով:Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապասույն կետըհանվումէնախագծից:

[9]Եթեպայմանագիրըկնքվելէ«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապատուգանքըհաշվարկվումէայնհամաձայնագրիգնինկատմամբ, որի

շրջանակումարձանագրվելէստանձնվածպարտավորությունների չկատարմանկամչպատշաճկատարմանհանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[10]*Պետականբյուջեիմիջոցներիհաշվինպարտավորություններչառաջացնող գնումներիդեպքումսույննախադասությունը պայմանագրիցհանվումէ:*

[11] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[12]*Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[13]*Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2021թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/14 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ծառայության			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	92621110/3	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	Ծառայությունը նախատեսում է Հանրապետական ուսանողական 22-րդ մարզական խաղերի եզրափակիչ փուլի կազմակերպում (այսուհետ՝ Խաղեր): Խաղերն իրականացվում է համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի ապրիլի 11-ի № 11-Ա/2 հրամանով հաստատված կանոնակարգի (ծանոթանալ նախարարությունում)(այսուհետ՝ Կանոնակարգ): Հանրապետական ուսանողական մարզական խաղերը անցկացվելու է մեկ փուլով. Հանրապետական եզրափակիչ փուլ: Խաղերի անցկացումը նախատեսում է իրականացնել ներքոնշյալ չափանիշներին համապատասխան: Միջոցառման անցկացման չափորոշիչներ 1. Խաղերի անցկացման չափանիշները Խաղերը անցկացվելու է մեկ փուլով հոկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 6-ը՝ Երևան քաղաքում:

			Կատարողը կանոնակարգի պահանջների համաձայն պետք է ապահովի Խաղերի անցկացման համար անհրաժեշտ համապատասխան տարածք, դրա ձևավորումը, գույքը, վկայագրերը (հավաստագիր, շնորհակալագիր), գավաթները, ՀՀ մարզերում գործող ԲՈՒՀ-երից ժամանած մասնակիցների և մրցավարների սննդի, գիշերակացի, ճանապարհածախսի, տեղի թիմեին սննդով ապահովում, հաղթող թիմերի դրամական պարգևը և այլն, որը մանրամասն ներկայացվում է ստորև: Կատարողը կազմում է մրցանակների, այդ թվում՝ դրամական պարգևների, գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառնում են հանձնման-ընդունման ակտի անբաժանելի մասը: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով սպորտի քաղաքականության վարչության հետ: Խաղերը կանցկացվեն հետևյալ մարզաձևերից՝ Բասկետբոլ (տղաներ, աղջիկներ), Վոլեյբոլ (տղաներ, աղջիկներ), Ֆուտզալ (տղաներ), Հրաձգություն օդամղիչ հրացանով (տղաներ, աղջիկներ), Աթլետիկական հնգամարտ (տղաներ, աղջիկներ), Սեղանի թենիս (տղաներ, աղջիկներ), Բազկամարտ (տղաներ, աղջիկներ), ՈՒժային եռամարտ (տղաներ, աղջիկներ): 1) Եզրափակիչ փուլի անցկացման համար անհրաժեշտ է հետևյալը՝ Եզրափակիչ փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված անհատներին և թիմերին տրամադրվում է Հավաստագիր՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերին՝ 267 հատ:Չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, (օրինակելի ձևը կցվում է):Տեքստը համաձայնեցնել սպորտի քաղաքականության վարչության հետ: Շնորհակալագիր՝ 4-12-րդ տեղեր գրված թիմերին՝ 12 հատ: Չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, (օրինակելի ձևը կցվում

				է):Տեքստը համաձայնեցնել սպորտի քաղաքականության վարչության հետ: Գրպանիկով թղթապանակ զինանշանով՝ (հավաստագիր և շնորհակալագիր) 63 հատ:Չափսը՝ 32 x 22 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ:Տեքստը համաձայնեցնել սպորտի քաղաքականության վարչության հետ: Մեդալներ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերի մասնակիցներին՝ 249 հատ:Չափսը՝ 5 սմ տրամագծով x 3 մմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից: Տեսքը համաձայնեցնել սպորտի քաղաքականության վարչության հետ: Դրամական մրցանակ՝ բասկետբոլ, վոլեյբոլ և ֆուտզալ մարզաձևերում (աղջիկ, տղա) 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերին, մարզագույք ձեռք բերելու համար. 1-ին տեղ՝ 190000 ՀՀ դրամ (մեկ հարյուր ինևսուն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը), (աղջիկ, տղա), x 5 թիմ = 950.000 դրամ 2-րդ տեղ՝ 160000 ՀՀ դրամ (մեկ հարյուր վաթսուն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը), (աղջիկ, տղա), x 5 թիմ = 800.000 դրամ 3-րդ տեղ՝ 140000 ՀՀ դրամ (մեկ հարյուր քառասուն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը), (աղջիկ, տղա), x 5 թիմ = 700.000 դրամ Դրամական մրցանակ՝ ընդհանուր հաշվարկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված ԲՈՒՀ-երին, մարզագույք ձեռք բերելու համար 1-ին տեղ՝ 450000 ՀՀ դրամ (չորս հարյուր հիսուն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը), 2-րդ տեղ՝ 350000 ՀՀ դրամ (երեք հարյուր հիսուն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը), 3-րդ տեղ՝ 300000 ՀՀ դրամ (երեք հարյուր հազար), (ներառված հարկերն ու տուրքերը), (Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի N 984-Ն որոշման): Գավաթներ՝ ընդհանուր թիմային հաշվորկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված ԲՈՒՀ-երի համար 3 հատ: Չափսերը՝ 65 սմ, 60

			սմ և 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, միանման, էբոնիտե պատվանդանով վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձայնեցնել սպորտի քաղաքականության վարչության հետ:(յուրաքանչյուր չափսից՝ 1 հատ), Գավաթ՝ըստ մարզաձևերի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերի համար՝ 39 հատ: Չափսերը՝ 55 սմ, 50 սմ և 45 սմ բարձրությամբ, ոսկեգույն, միանման, էբոնիտե պատվանդանով վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձայնեցնել սպորտի քաղաքականության վարչության հետ: Հուշանվեր՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված մարզիկներին 78 հատ,: (սեղանի թենիս, ուժային եռամարտ, հրաձգություն և բազկամարտ մարզաձևերում) Հուշանվեր՝ լավագույն մարզիկներ և մրցավարներ՝ 18 հատ. 2) Եզրափակիչ փուլում Կատարողը ապահովում է. Երևան քաղաքում դրսից ժամանած մասնակիցների կեցուցթյուն (գիշերակաց)՝ երկտեղանոց համարներ՝ փափուկ մահճակալներով, ապահոված սանհանգույցներով, տաք և սառը ջրի առկայությամբ (ընդհանուր՝ 1245 մարդ/օր (աղջիկ և տղամարդ), դրսից ժամանած թիմերի սննդի ապահովում՝ (սնունդ 3 անգամ) 1536 մարդ/օր: Ապահովում է նաև՝ դրսից ժամանած մասնակիցների ճանապարհածախսը (ընդհանուր՝ 758 մասնակից): Ըստ մարզաձևերի Կատարողը՝ մրցավարներին և բժշկներին ապահովում սննդով՝ 366 մարդ/օր, համաձայն նեկայացված ցանկի՝ Բասկետբոլ - գլխավոր մրցավար՝ 2 մարդ x 7 օր, մրցավար՝ 10 մարդ x 6 օր, բժիշկ՝ 1 մարդ x 6 օր: Վոլեյբոլ - գլխավոր մրցավար՝ 2 մարդ x 7 օր, մրցավար՝ 10 մարդ x 6 օր, բժիշկ՝ 1 մարդ x 6 օր: Ֆուտզալ - գլխավոր մրցավար՝ 2 մարդ x 7 օր, մրցավար՝ 12 մարդ x 6 օր, բժիշկ՝ 1 մարդ x 6 օր: Հրաձգություն օդամղիչ հրացանով - գլխավոր մրցավար՝ 2 մարդ

			x 3 օր, մրցավար՝ 8 մարդ x 1 օր, բժիշկ՝ 1 մարդ x 1 օր։ Աթլետիկական հնգամարտ - գլխավոր մրցավար՝ 2 մարդ x 3 օր, մրցավար՝ 10 մարդ x 2 օր, բժիշկ՝ 1 մարդ x 2 օր։ Սեղանի թենիս - գլխավոր մրցավար՝ 2 մարդ x 3 օր, մրցավար՝ 6 մարդ x 1 օր, բժիշկ՝ 1 մարդ x 1 օր։ Բազկամարտ - գլխավոր մրցավար՝ 2 մարդ x 2 օր, մրցավար՝ 10 մարդ x 2 օր, բժիշկ՝ 1 մարդ x 2 օր։ Ուժային եռամարտ - գլխավոր մրցավար՝ 2 մարդ x 3 օր, մրցավար՝ 12 մարդ x 2 օր, բժիշկ՝ 1 մարդ x 2 օր։ (Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի N 984-Ն որոշման)։ Անհրաժեշտ տրանսպորտային միջոց՝ Երևան քաղաքում։ Ծանոթություն. Հավաստագիր, մեդալներ, գավաթներ, հուշանվերներ, մարզագույք տեղափոխումը իրականացվում է Կատարողի կողմից համաձայն սպորտի քաղաքականության վարչության կողմից տրամադրված ցուցակի։ 2. Եզրափակիչ փուլի մրցույթի անցկացման համար Կատարողը ապահովում է. Մարզադահլիճ Երևան քաղաքում։ Մարզադդահլիճ աթլետիկական հնգամարտի համար՝ ունենա ռետինապատ ծածկույթով վազքուղիներ, գծանշված։ 6 կահավորված մարզադահլիճներ՝ բասկետբոլի, վոլեյբոլի և ֆուտզալի մարզաձևերի համար, մարզադահլիճը պետք է ունենա առնվազն 24 մետր լայնություն և 36 մետր երկարություն, էլեկտրոնային ցուցատախտակով, կահավորված նստատեղերով մրցավարների և հանդիսատեսի համար, պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար պատվանդանի առկայությամբ։ Հրաձգարան, սեղանի թենիսի, ուժային եռամարտի և բազկամարտի մարզադահլիճներ, կահավորված համապատասխան գույքով։ Մարզադահլիճի չափսերը, կահավորման տեսքը համաձայնեցնել սպորտի քաղաքականության վարչության հետ։ (համաձայն ներկայացված

				ժամանակացույցի)։ Ձայնային տեխնիկայի ապահովում մարզադահլիճում: Բարձրախոսներ՝ ընդհանուր 7 ԿՎ հզորությամբ, 2 հատ միկրոֆոն առանց լարի՝ հեռակառավարվող, 1 հատ միկրոֆոն լարով, միկրոֆոնի տակդիր՝ 3 հատ, ձայնի կառավարման միկշերային վահանակ:(1 օր) Հաղորդավարի ծառայություն՝ 1 օր, Միջոցառման ավարտին ճայթռուկ մարզադահլիճում (հրավառություն), (6 կետից) Ֆոտո և տեսանկարահանում՝ 4 օր, Գովազդային պաստառ (Բաներ)՝ միջոցառման անվանումով, պատրաստված պոլիէսթերային նյութից, բանների չափսերը՝ 2,5 մ x 2,5 մ, 4 եզրերը 15-20 սմ հեռավորությամբ մետաղյա օղերով, բաների տեքստը համաձայնեցնել սպորտի քաղաքականության վարչության հետ: քանակը՝ 3 հատ, 1) Մրցավարական հանձնաժողովի և մրցավարների աշխատանքները ապահովելու համար անհրաժեշտ գրենական պիտույքներ՝ Թղթե արագակար՝ կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար՝ 10 հատ, Ֆայլ՝ թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ՝ 50 հատ Թղթե կպչուն ժապավեն՝ տնտեսական, մեծ գլանափաթեթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100մ՝ 6 հատ, Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7)՝ չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված,80 գ/մ2 (210 x 297) մմ: 2 տուփ, Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի 10 հատ, Գրիչ գնդիկավոր՝ տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերի 10 հատ, 2) Եզրափակիչ փուլի խաղերի

			անցկացման համար Կանոնակարգի ծրագրին համապատասխան Կատարողը ապահովում է անհրաժեշտ մարզագույք՝ Գնդակ բասկետբոլի՝ 4 հատ (կաշվե կամ փոխարինող հումքից, N 6), Բասկետբոլի ցանց ՝ 2 զույգ, Գնդակ վոլեյբոլի՝ 4 հատ (կաշվե կամ փոխարինող հումքից, բարձր որակի), Գնդակ ֆուտզալի՝ 2 հատ (կաշվե կամ փոխարինող հումքից, բարձր որակի), Հրաձգության համար՝ 200 հատ թիրախներ, 1500 հատ օդամղիչ հրացանի փամփուշտներ, Աթլետիկական հնգամարտ՝ 3 հատ էլեկտրոնային պլաստմասե պատյանով: Կատարողը վարչության կողմից ներկայացված ցանկի համապատասխան կատարողը կազմում է մրցանակների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառնում են ընդունման և հանձման ակտի անբաժանելի մաս: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնացնելով սպորտի քաղաքականության վարչության հետ: Մրցույթի ընթացքում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելման համար միջոցառման մասնակիցներին անհրաժեշտ միջոցներով ապահովում (բժշկական դիմակ, հականեխիչ (անտիսեպտիկ) հեղուկներ ձեռքերի ախտահանման համար): Կցված է 5a22f695.pdf

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011032621
02698732
Վահրամ Գասպարյան
_____

GASPARYAN VAHRAM 3203740222
Подписано цифровой подписью: GASPARYAN VAHRAM 3203740222
DN: c=AM, sn=•••••••••, givenName=••••••, serialNumber=2e62710a6b88, cn=GASPARYAN VAHRAM 3203740222
Дата: 2021.07.08 10:31:04 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ
Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ
Հասցե՝ tigranaro@mail.ru
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
15100441064401008381 2178
Տիգրան Բալդրյան
_____
/ստորագրություն/

/ստորագրություն/ Կ.Տ

Կ.Տ

Հավելված N 2
____/_____/2021թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/14 ծածկագրով պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
				հասցեն	ժամկետը**
դրամ	18700000.00	18700000.00	1	ք. Երևան	07.10.2021 թ. մինչև 06.12.2021 թ. բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում.

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ

մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011032621

02698732

Վահրամ Գասպարյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

GASPARYAN VAHRAM 3203740222

Подписано цифровой подписью: GASPARYAN VAHRAM 3203740222
DN: c=AM, sn=•••••••••, givenName=••••••, serialNumber=2e62710a6b88, cn=GASPARYAN VAHRAM 3203740222
Дата: 2021.07.08 10:31:19 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ

Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ

Հասցե՝ tigranaro@mail.ru

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

1510044106440100

83812178

Տիգրան Բալդրյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
____/_____/2021թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/14 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	92621110/3	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ										18700000.00	18700000.00	18700000.00	18700000.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011032621

02698732

Վահրամ Գասպարյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

GASPARYAN VAHRAM 3203740222

Подписано цифровой подписью: GASPARYAN VAHRAM 3203740222
DN: c=AM, sn=•••••••••, givenName=••••••, serialNumber=2e62710a6b88, cn=GASPARYAN VAHRAM 3203740222
Дата: 2021.07.08 10:31:33 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ

Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ

Հասցե՝ tigranaro@mail.ru

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

1510044106440100

83812178

Տիգրան Բալդրյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 4
____/_____/2021թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/14 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/14-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայման ագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայման ագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	սպորտային միջոցառումների կազմակերպմ							

	ան ծառայությունններ							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	**Ծառայությունն ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 4.1
____/_____/2021թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/14 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ (այսուհետ՝ Կատարող)
միջև 20__թ._____ -ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/14-1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	դրամ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն